

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԻԵՆՆԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԻՆԱԼ ՖՐԱՆՑ ՔՅՈՆԻԳԻՆ՝ ԻՐ ՊԱՏՎԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(22 ապրիլի 1981 թ., Վիեննա)

«Եւ ասաց Աստուած՝ եղիցի լոյս և եղև լոյս»:

Աստվածային արարչագործությունը սկսվեց խաղաղության արարքով: Լույսի ստեղծումը Աստուծո առաջին խաղաղարար գործը եղավ, որով քաոսը վերածվեց Կոսմոսի, այսինքն ներդաշնակության: Անձև ու խավար անսահման տարածության խառնարանը, լույսով՝ վերածվեց մի տիեզերական ներդաշնակ ու օրինաչափ դրության:

Սուրբ Գիրքը «Եղիցի լոյս»-ից սկսյալ մինչև իր վերջին շունչը, աստվածային խաղաղարար մի տնօրինություն է: Աստված նույնիսկ Իր Որդին աշխարհ առաքեց խաղաղության պատգամով, նոր լույսով փարատելու համար քաոսը մարդկային հոգեկան աշխարհի, այնտեղ ևս ստեղծելու խաղաղ, ներդաշնակ ու օրինաչափ մի դրություն:

Հիսուս՝ լինելով արեգակ արդարության, եղավ իշխան խաղաղության:

Հիսուս եղավ մի նոր «Եղիցի լոյս» մարդկային հոգեկան տիեզերքի մեջ, նույն աստվածային արարչագործ տնօրինությամբ:

Խաղաղության ու արդարության ավետաբերներ են եղել նաև այլ մեծ կրոնների հիմնադիրները, նաև շատ իմաստուններ ու փիլիսոփաներ, Սոկրատեսից մինչև Էմմանուել Քանդ և մինչև մեր օրերը:

Հաճելի է Մեզ հիշել նորագույն շրջանի փիլիսոփաներից Հերպերտ Սպենսերի հետևյալ մարգարեությունը՝

«Ընկերային այլասիրական բարոյականությունը իր կատարելության պիտի հասնի աշխարհի վրա այն ժամանակ, երբ մարդիկ իրենց ամենօրյա պահանջը նկատեն մտահոգությունը իրենց նմանների երջանկության»:

Մեծ բանաստեղծներ, արվեստի և գիտության մարդիկ նույնպես գովերգել են ու երազել՝ խաղաղ և արդար հարաբերություններ մարդկանց և ժողովուրդների միջև:

Ինչքան բարոյական վեհություն կա օրինակ, Լամարտինի հետևյալ խոսքերի մեջ՝

«Տկարների ազատությունը
Ուժեղների փառքն է հանդիսանում»:
(„La liberte des plus faibles
Est la gloire des plus forts“):

Եվ ինչքան արդիական է հնչում այս պատգամը, մեզ՝ այսօրվաններիս:

Ակներև է թե, մարդկանց հավաքական կյանքում, խաղաղ ու արդար հարաբերությունները արգելակող, խաթարող ուժերը, մարդկային եսակենտրոն ձգտումներն են հանդիսանում, մանավանդ՝ տիրապետելու կիրքն ու հարստանալու տենչը:

Ինքը Հիսուս և իր մեծ առաքյալը Պողոս մատնանիշ են անում այս երկու թունավոր արմատները՝ պատգամելով բոլոր ժամանակների մարդկանց՝ «Ով կամենա ձեր մեջ առաջինը լինել, թող նա բոլորին լինի սպասավոր» (Մարկոս Ժ 44):

Քրիստոսի հոգին կրող սուրբ մարդիկ, բազում անգամներ խաղաղության և բարի կամեցողության այս պատգամներն են քարոզել իրենց ժամանակակիցներին, բազում անգամներ դատապարտել են պատերազմը:

Եվ այստեղ, թույլ տվեք հիշել թե պատերազմների ընթացքում ծանր է լինում ճակատագիրը մանավանդ փոքր ժողովուրդների, որոնք առանց որևէ պատասխանատվություն ունենալու, ոտքի կոխան են դառնում և երբեմն առավել մեծ զոհեր են տալիս, քան թե պատերազմող պետությունները: Այդպես եղավ, օրինակ, ճակատագիրը մեր փոքրիկ ազգի, հայ ազգի, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, երբ նրա կեսը, շուրջ երկու միլիոն հոգի, զոհ գնաց 1915-ի ցեղասպանության Արևմտյան Հայաստանում:

Անցյալ ողբերգությունների փորձը թող ուղեցույց լինի բոլոր ժողովուրդներին, մանավանդ պետությանց ղեկավարներին:

Իբրև քրիստոնյա մի Եկեղեցու առաջին սպասավոր, խոսելով խաղաղության մասին, Մենք բնականաբար հավատում ենք թե այն իրագործելի է մանավանդ Հիսուսի Ավետարանի և բարոյական սկզբունքների ներգործությամբ: Հավատում ենք թե այդ է միակ ուղիղ ճանապարհը բարեշրջելու մարդկային հոգեկան աշխարհը, պոկելով այնտեղից թունավոր արմատները եսակենտրոն մղումների: Հավատում ենք, այո, թե հնարավոր կլինի տակավ իրականացնել ցանկալի բարեշրջումը մարդկանց գիտակցության, համաշխարհային չափերով դաստիարակչական աշխատանք ծավալելով բոլոր ազգերի ծոցում, հիմնական նպատակ ունենալով ամեն մարդու ներշնչել նրա իրավունքը խաղաղ ապրելու և պարտականությունը պաշտպանելու իր նմանների խաղաղ ապրելու իրավունքը:

Կարծում ենք թե այս նույն մտածումով առաջնորդված, հանգուցյալ Հովհաննես 23-րդ Պապը, 1963-ին, իր ծանոթ «Pacem in Terris» կոնդակում գրում էր՝

«Մեր օրերին համընդհանուր բարօրության հարցը մեր առաջ դնում է համաշխարհային տարողությամբ խնդիրներ: Այդ խնդիրները կարող են իրենց լուծումը գտնել միայն միջազգային մի իշխանության ստեղծումով, իշխանություն, որի ուժը, կազմությունը և գործունեության միջոցները իրենք ևս համաշխարհային տարողություն ունենան, և որը կարողանա ի գործ դնել իր ազդեցությունը երկրագնդի ողջ տարածքի վրա: Ուրեմն, մարդկային բա-

բոյական կարգը ինքն իսկ պահանջում է ստեղծումը համաշխարհային իրավասություն ունեցող նման միջազգային մի իշխանության»:

Հիշենք դարձյալ Հովհաննես-Պողոս Բ Պապի խոսքերը, նույն գաղափարով ոգեշնչված՝

«Տէր Աստված, հեռո՛ւ պահիր մեզ պատերազմից, ո՛րևէ պատերազմից: Հա՛յր մեր, որ երկնքում ես, Հա՛յր կյանքի, Տի՛ր Խաղաղության, աղաչում է Քեզ Պապը, զավակը մի ժողովրդի, որը պատմության ամբողջ ընթացքում և հատկապես այս վերջին դարում ամենից շատ տուժողներից մեկը եղավ աշխարհասասան պատերազմի արհավիրքներից և վայրագությունից: Աղաչում եմ Քեզ հանուն աշխարհի բոլոր ժողովուրդների, հանուն բոլոր երկրների և ցամաքամասերի» (1 հունվար 1979):

Ձերդ Սրբազնություն, Տիկնայք և Պարոնայք, ահա այս խոսքերով և մտածումներով կցանկանայինք ողջունել Վիեննայում հիմնադրված «Pro-Oriente» կազմակերպությունը, որը նվիրված է Արևելյան Եկեղեցիների ուսումնասիրման և վերոհիշյալ Եկեղեցիների ու Հռոմեական Կաթողիկե մեծ Եկեղեցու միջև երկխոսությունների զարգացման գործին՝ հիմնական նպատակ ունենալով նպաստել Եկեղեցիների միության գաղափարի կենսագործմանը: Մենք բարձր ենք գնահատում այս նախաձեռնությունը և մաղթում ենք որ «Pro-Oriente»-ն առաջ ընթանա դեպի նորանոր հաջողություններ, այն հաստատ համոզումով, որ Եկեղեցիների միության ճանապարհին, մենք բոլորս, քրիստոնյա բոլոր Եկեղեցիները իրենց առաջնահերթ պարտականությունը պիտի նկատեն միասնաբար աղոթել և գործել ի խնդիր աշխարհի խաղաղության և պետությունների խաղաղ գործակցության, ի խնդիր գինաթափման և ատոմական ուժի գործածության խաղաղ նպատակներով:

Թող Եկեղեցիների միությունը Քրիստոսի՝ սիրո մեջ և քրիստոնեական տիեզերական եղբայրության ամրապնդումը դառնան մի նոր «Եղիցի լոյս» մեր օրերի մարդկային աշխարհում:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, հարազատ արտահայտիչը հայ ժողովրդի ոգեկան գիտակցության և ազգային իղձերի, ցանկանում է, իր համեստ հնարավորությունների սահմանում, համագործակցել Արևելքի և Արևմուտքի բոլոր Եկեղեցիների հետ ավետարանական ոգով՝ հիրագործումն Քրիստոսի խաղաղության և արդարության պատգամների համայն աշխարհում:

Ձերմ հավատով և մեր քրիստոնեական առաքելության ողջ գիտակցությամբ մենք մասնակցում ենք Էկումենիկ շարժմանը, այն համոզումով, որ այդ շարժմամբ մեր օրերում առավել պայծառությամբ պիտի նառագայթի փառքը մեր Փրկչի Հիսուսի Քրիստոսի:

Մեր խոսքը վերջացնելուց առաջ, թույլ տվեք ներկայացնել ձեզ Մեր անկեղծ շնորհակալությունը Մեզ ընծայված այս հանդիսավոր պահի համար: Այս պատմական օրը Մեզ համար պիտի մնա անմոռանալի և պիտի դրոշմվի սպիտակ մարմարի վրա, ինչպես Հռոմայեցիք սովոր էին արտահայտվել նման առիթներով:

Այս հանդիսավոր օրվա համար Մենք պարտական ենք հատկապես Վիեննայի Արքեպիսկոպոս Նորին Սրբազնություն Ֆրանց Քյոնիկին, որն այնքան ջերմ սրտով կազմակերպեց բոլոր ընդունելությունները, որոնք վերապահվեցին Մեզ Վիեննայում Մեր գտնվելու օրերին:

Սիրեցյալ եղբայրներ և քույրեր, հայ ժողովրդի քրիստոնեական հա-

վատքի կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք ձեզ Աստուծո օրհնությունը և Մեր սրտից բխած ամենաբարի մաղթանքները:

Թող մեր Տերը միշտ անսասան պահի ձեր պատմական մեծ Եկեղեցին, և ձեր սքանչելի երկիրը թող միշտ ծաղկի խաղաղության ու բարօրության մեջ:

«Արդ մի մերժէք ի ձէնջ զհամարձակութիւնն ձեր, յորում կայ մեծաց վարձուց հատուցումն: Պիտոյ է ձեզ համբերութիւն, զի զկամս Աստուծոյ առարեալ հասջիք աւետեացն» (Եբր. Ժ 35—37): Ամեն: